ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՂ ՊՏՂՈՒՆՔ
Հ/Հ 900322235038
ՀՎՀՀ –04701766
ԻՆԴԵՔՍ 1145

ՀԵՌԱԽՈՍ 02316-35-50

РА АРМАВИРСКАЯ
ГУБЕРНЯ СЕЛО ПТГУНК
ИНДЕКС 1145
ТЕЛ.0231 6-35-50
RA THE MARZ OF ARMAVIR
VILLAGE PTGHUNK
INDEX 1145

թիվ 01-152 04.12 2012թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն՝ Ա.Ղահրամանյանին

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ եմ ներկայացնում 2012 թվականի Նոյեմբեր ամսվա ընթացքում Արմավիրի մարզի Պտղունք համայնքի ղեկավարի ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր 7 էջ:

Պտղունք համայնքի ղեկավար՝ Կ.Արթենյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 10826-12
«05» 12 2012

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«01» Նոյեմբեր 2012թ — թիվ 16

## ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով:

Կարգադրում եմ՝

1. 2012 թվականի Նոյեմբերի 1-ից Արմավիրի մարզի Պտղունք գյուղական համայնքի համայնքային ծառայության աշխատակազմի քարտուղարի թափուր պաշտոնում ժամանակավոր պաշտոնակատար նշանակել աշխատակազմի առաջատար մասնագետ (ծած. 3.1-4)՝ Համիկ Վոլոդյայի Ներսիսյանին:
2. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Պտղունք համայնքի ղեկավար՝ /Գ.Արթենյան/

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

---

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«08» Նոյեմբեր 2012թ          թիվ 17

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, համայնքային սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման աշխատանքները իրականացնելու նպատակով.

Կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի
2. Հանձնաժողովին (Հ.Հարությունյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել նյութական պատասխանատու անձանց և համայնքի ավագանու անդամներ՝ Արամ Արթենյանին և Ալիկ Հովհաննիսյանին (համաձայնությամբ)
3. Հանձնաժողովին (Հ.Հարությունյան) սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել եռօրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին:
4. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Պտղունք համայնքի ղեկավար՝          /Կ.Արթենյան/

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Նորունք
համայնքի ղեկավարի
2012 թվականի նոյեմբերի 8-ի
թիվ 1[illegible] կարգադրության

## ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝ - Համիկ Հարությունյան- առաջատար մասնագետ
անդամ -Մարիամ Աղաջանյան-առաջատար մասնագետի ժ/պ
անդամ - Աղվան Ավետիսյան - առաջատար մասնագետ
անդամ -Արամ Արթենյան - ավագանու անդամ (համաձայնությամբ)
անդամ - Ալիկ Հովհաննիսյան - ավագանու անդամ (համաձայնությամբ)
հանձնող - Էդիկ Արաբյան - համայնքի ղեկավարի տեղակալ

ընդունող- Կարապետ Արթենյան – նորընտիր համայնքի ղեկավար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«26» Նոյեմբերի 2012թ — թիվ 18

## ՌՈԶԻԿ ՔԵՐՈԲԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Ռոզիկ Քերոբի Խաչատրյանի Նոյեմբերի 23-ի դիմումը:

### Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք գյուղական համայնքի «Տեր և Տիկին Ղազարյանների անվան» նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ-ի տնօրեն՝ Ռոզիկ Քերոբի Խաչատրյանին 2012 թվականի Նոյեմբերի 26-ից տրամադրել իրեն հասանելիք 2012 թվականի ամենամյա արձակուրդը՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Ռոզիկ Խաչատրյանի բացակայության ընթացքում նրա աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել մանկապարտեզի մանկավարժ-դաստիարակ՝ Նարինե Կարապետյանին:
3. Ռոզիկ Խաչատրյանին աշխատանքի մեջ համարել 2012 թվականի դեկտեմբերի 28-ին հաջորդող աշխատանքային օրը:
4. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Պտղունք համայնքի ղեկավար — /Կ.Արթենյան/

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզի
Պտղունք համայնք, 0231-6-35-50 ptghunk 1@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«24» Հոկտեմբեր 2012 թվականի N 37

## ՊԱՇՏՈՆԸ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18 հոկտեմբերի 2012 թվականի №1304 -Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության թիվ 19 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի սեպտեմբերի 14-ի №160-Ա որոշումը՝

Որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնի ստանձնման օր համարել 2012 թվականի Հոկտեմբերի 24-ը:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ԱՐԹԵՆՅԱՆ

2012 թ. Հոկտեմբեր 24

Գյուղ Պտղունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզի
Պտղունք համայնք, 0231-6-35-50, ptghunk 1@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«26» Նոյեմբեր 2012 թվականի N 38

# ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրաետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 7-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին» թիվ 1 որոշումը.

Որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք գյուղական համայնքի սեփականատեր՝ Միասնիկ Բագրատի Հովսեփյանին պատկանող տնամերձ հողամասին (ծածկագիր 022-003) ՝ տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք գյուղական համայնքի Թամանյան փողոց թիվ 25 տնամերձ հողամաս:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.ԱՐԹԵՆՅԱՆ

2012 թ. Հոկտեմբեր 24

Գյուղ Պտղունք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզի
Պտղունք համայնք, 0231-6-35-50, ptghunk 1@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«27» Նոյեմբեր 2012 թվականի N 39

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ և 19-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 29.08.2006թ.-ի թիվ 12-Ն հրամանով հաստատված N2 հավելվածի 8-րդ կետը.

Որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք համայնքի զյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետների ( ծածկագիր՝ 3.1-1,3.1-3,և 3.1-4) համայնքային ծառայության ատեստավորում անցկացնել ս/թ-ի դեկտեմբերի 26-ին ժամը 12⁰⁰-ին Պտղունքի գյուղապետարանում՝ համաձայն հավելվածի:
2.Հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնելու նպատակով լիազորված անձ նշանակել համայնքային ծառայության առաջատար մասնագետի (ծած.3.1-2) ժամանակավոր պաշտոնակատար՝ Մարիամ Աղաջանյանին:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.ԱՐԹԵՆՅԱՆ

2012 թ. Նոյեմբերի 27

Գյուղ Պտղունք

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի
ԹԻՎ 39 ՈՐՈՇՄԱՆ

# ՑՈՒՑԱԿ
# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ

1.Հարությունյան Հասմիկ Գաբրիելի- առաջատար մասնագետ ծած.(3.1-1)

2.Ավետիսյան Աղվան Գարսևանի- առաջատար մասնագետ ծած. (3.1-3)

3.Ներսիսյան Հասմիկ Վոլոդյայի - առաջատար մասնագետ ծած. (3.1-4)